



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Ս. ՎԱՐԴԵՐԵՍ




ՍԻՐՈՅ ԵՒ ՎՆՏԻ  
ՊՕԷՄՆԵՐ






Ս. ՎԱՐԴԵՐԵՍ



# ՍԻՐՈՅ Է ՎՇՏԻ

## ՊՕԷՄՆԵՐ



A  $\frac{11}{41694}$




1929

Տպարան ԱՐԱՐԱ Պ Մարտէլ  
— 17, ռիւ տէ Տօմինիքէն —



ՓՈՒԱՆ ՅԱՌԱՋԱԲԱՆԻ

Սիրտս ետնայի նման,  
ջի գտաւ երբէք դարման,  
Արդիւնքը սիրոյս ատակ,  
Թող մնայ ձեզ միշտ կտակ :





### Ի Ր Ի Կ Ո Ի Ն Մ Ը

Պարնան երեկոյ մը այսպէս  
Մտան յատակ մը նստած,  
Միշտ բան մը կար մէջը սրտիս,  
Կարծես մէջս էր դարբինուած :

Մով քամին յաճախ կը փչէր  
Պաղ - պաղ՝ իմ թառամած ճակտին,  
Նա կարծես բան մը ըսել կ'ուզէր  
Իմ կաշկանդուած հոգիին :

Թոչուէն մըն էր որ կ'երգէր,  
Բարձր՝ լուրթ լեռան կատարէն,  
Կարծես ինձ աւետ բերած էր  
Հեռաւոր սիրոյ աշխարհէն :

## ՋՐԵԶԵՐՔԸ

Ջուրը կը վազէ հոն լեռան լանջքէն  
Մերթ մեղմօրէն և մերթ սուրալէն,  
Եւ ինչպէս մերթ հոգի մը սրտայոյզ  
կը դառնայ անդորր եարէ մը կոյս :

Ջուրը կը հոսի մերթ այնքան անդորր,  
Վարդասիրտս է արցունքի մէկ հոր.  
Ջուրը կ'ընթանայ յաճախ յամբօրէն,  
Կարծես եղկ սիրտս կոյսեր կ'օրօրեն:

Ջուրի այդ բոլոր վազքաշրջանին՝  
կոյս մըն է որ զիս կը տանի մթին,  
Հոծ խոց ունի սիրտս ու հոգիս,  
Ո՛վ պատկեր կոյսի ո՞ւր կը տանիս զիս:

Մերթ կոյսին վարդ դէմքը ինծի կ'երեւի  
Երկնային հրեշտակի կը նմանի,  
Կը բաղձամ բռնել ու զգուել, սիրել,  
Սակայն նա յանկարծ ձեռքէս կը փախի:

Բնութեան մաքուր ծոցէն կը հոսիս,  
Ինչո՞ւ կը խաբես իմ հիւծեալ հոգիս.  
Անուշիկ առուակ բնութեան ծոցէն  
Պիտ բերե՞ս աւետ իմ սիրած կոյսէն:



Ս Է Ր Ը


Ալ ինձ համար մարդկութիւնը  
Սոսկալի դատարկ կը թուի,  
Քանի որ քու անուշ սէրը  
Տակաւ մէջս կը տոգորուի:

Ո՛չ մէկ ուժէ ես կը վախեմ,  
Ո՛չ բանտէ, ո՛չ կախաղանէ,  
Միշտ հոգւոյս ես կը սիրեմ  
Հարբած եմ սիրոյ բաժակէ:

Ի՞նչ կ'ընէ զիս կախաղանը,  
Անահ կը մերձենամ լարին,  
Տալու իմ յոգնարեկ վիզը,  
Կը հեզնեմ անգամ ես այդ լարին:

Եթէ նոյն իսկ բանտը թըխուիմ  
Պիտի հեզնեմ եւ այդ բանտը,  
Սիրուդ համար պիտ հանդրժեմ  
Մինչև փրկութեան վարդ օրը:

Պատրաստ եմ տուայտուելու,  
Պատրաստ եմ միշտ, ամէն օր  
Նոր տառապանքի, նոր բանտերու,  
Դարձեալ պիտ սիրեմ սրտովս բոլոր:



Մ Ե Ղ Ք Ե Մ

Ինչո՞ւ կը հիւժես իմ հողին այսքան  
Ու չես մեղքնար իմ եղկ դրութեան,  
Մեղքցիր սրտաճմլիկ վիճակիս  
Իմ անուշ ու քաղցր պաշտելիս:

Ձե՞ս մեղքնար դո՛ւ իմ վարդ հասակին  
Որ սեւ ազոաւներու քմայքին  
Մարմինս պիտի դառնայ առարկայ՝  
Դեռ քո սիրտը անտարբեր կը մնայ:

Եթէ սիրէի անդամ այն Հ եր ա ն,  
Ձի պիտի ուզեր իմ հողին այսքան,  
Ձի վարդ մ'եմ, դեռ վարդ մը գարնան,  
Ձիս պիտ սփոփէր սրտովը Հ եր ա ն:

Սակայն դու դեռ քարացած սրտով  
կը հեգնես զիս Ալէլուիայով,  
Մեղքցիր ինձ ո՛վ իմ սիրելի  
Ձի Աշխարհիս մէջ ես չի խնդացի:

Ալ մե'ղք եմ, կ'ըսեմ ո՛վ իմ սիրելի,  
Եւ կը հիւժես իմ սիրտը բարի  
Սիրեցի քեզ սրտովս անկեղծ  
Դու կը տքնիս ինձ ընել սիրահեղձ:

Բազոսէ մղուած չէ որ կը խօսիմ,  
Սիրաբաժակի գնով կը խօսիմ  
«Թէ մեղք եմ, ալ կը սպասեմ քեզմէ  
Սփոփելու՝ զի սիրտս կրակ է:

Սէրս սիրով դու ալ մկրտէ,  
Զի հոգիս վ. է ս ու լ Ք ի նման է:  
Ո՛չ մէկ հրշէջ այդ պիտի մարէ  
Եթէ ո՛չ, այլ այդ բացի քեզմէ:



Հ Ե Պ Ն Ա Ն Ք

Մի՛ հեգնէք զիս ո՛վ դուք մարդ էակք,  
Մի՛ օր և դուք ինձի պէս կ'ըլլաք.  
Թէ կը հեգնէք իմ անկեղծ սէրը  
Ձե՛զ ալ կը հեգնէ այն մեծ Տէրը:

Մի՛ հեգնէք իմ սէրը բովանդակ,  
Հոգիս պիտ դառնայ սիրուդ նահատակ,  
Մի՛ հեգնէք զիս ո՛վ իմ սիրելի  
Ձի սիրտս տակաւ կը մարի:

Սիրեցի ձեզ սրտովս բոլոր  
Կը սիրեմ ինչպէս երէկ և այսօր,  
Դեռ դուք կը խնդաք վէրքիս վրայ  
Մի՛ խնդաք էակ, ձեզի ալ կ'ըլլայ:

Մի՛ հեգնեք զիս, ո՛վ դու մարդ էակ,  
Մահէս վերջ կը ձգեմ մէկ կտակ.  
Կայ գեր էակ մը քեզմէ բարձր,  
Որուն արդէն մարդիկ են ծաղր:

ՏՐՏՄ ՈՒԹԵԱՆ ԿՈՊԷ

Մռալ ու անփորձ հոգիս  
Հաղիւ կեանքը ճաշակած,  
Հիւժեց դալար սիրտս  
Այն ջինջ սէրը պաշտուած:

Սիրեցի միշտ վարդը կեանքի,  
Բայց խայթեց տատասկի մը պէս,  
Ու լարեց կիթաոն իմ սրտի  
Որ յարեմ սիրոյ լաւ երգեր այսպէս:

Վշտահար սիրտս ուզեցի  
Սփոփել վարդին բուրումով,  
Մերձեցայ բոնել փորձեցի,  
Աւա՛ղ, հոտէ դաղրեցաւ շուտով:


Յոգնարեկ միտքս ու հոգիս  
Եթե րա կան դատաւորին  
Շանթահարէ, կ'ըսեն, վարդն այս .  
Եթէ անաշտ դատաւոր է՛ս մարդ էակլին:

Բ Ա Լ Ա Ս Ա Ն

Այն ո՞ր կ ա գ բ ե կ ն է որ սիրահարին՝  
Հոն գրէ միշտ ցաւը իր հոգիին  
Եւ ո՞րն է այն Հ ի պ ո կ ը ա տ ը վ ս ե մ՝  
Անկէց է որ սպեղանի կը սպասեմ :

Մեծ ու դառն է ցաւը իմ հոգւոյս,  
Նա կը քամուի՝ ինչպէս մի ողկոյզ,  
Մաշած է ալ հէք սիրտս ցաւագին  
Յայնժամ կառչած եմ սիրոյ փանդիտին :

Ձի՛ գտայ սակայն բալասան մը ինձ,  
Մինչ սահել է սիրաբաժակը իմ շրթունքից,  
Ո՛վ Տէր Աստուած վերեվի  
Ինձ տուր եղեմարոյր մի տելն :



ՎԵՐՋԻՆ ՎԱՅՐԿԵԱՆ,

Ո՛վ հոգառու Գ ա բ ը ի է է հրեշտակ,  
Գիտեմ թէ ինչու այդպէս ես կանգնած,  
Սպասէ՛ քիչ մը սա սնարիս տակ,  
Որովհետու դեռ սէրս չեմ առած :

Ո՛վ դու հրեշտակ այն մեծ Աշխարհի,  
Եկած ես իմ հիւժեալ հոգիս տանիլ  
Բայց չեմ ուզեր հետևիլ քեզի,  
Կ'ուզեմ վարդը դեռ կուրծքիս սեղմել :

Հրեշտակն իմ, ինչո՞ւ ես անոշորմ,  
Չե՞ս տեսներ մեծ վէրքը սրտիս վրայ  
Եւ հէք դրութիւնս աղիոշորմ,  
Սիրել կ'ուզեմ, սիրել հոգին նրա :

Եթէ քեզ այն Աստուածն է զրկած,  
Ես խօսքս կ'ուզղեմ և այն Աստծու,  
Որ կողէ մահացանկը կազմուած  
Մ'ինչ այն մահը սիրողին է կծու :

Պատրա՛ստ եմ՝ ես, միշտ, ամէն վայրկեան,  
Բայց միայն կ'ուզեմ որ սէրս առնեմ,  
Եթէ կայ այնտեղ կոյս մը յար և նման  
Եւ ես այն ատեն մահուան կ'սպասեմ:



Ո՛վ, ՄԱՅՐ ԻՄ

կը զգամ թէ մայր իմ, իմ մահը որքան  
Պիտ՝ տուայտէ քո սիրտը մայրական  
Մի՛ խոկար մայր իմ երբէք ինձ համար,  
Թէ ծաղիկ էր նա զնաց սիրահար:

Միթէ չե՞ս գիտեր դու անուշիկ մայր,  
Որ սիրողը կըլլայ միշտ շանթահար.  
Մահս թող չըլլայ վիշտ քո մաշած սրտին  
Թէ՛ որդիս կ'ըլլայ կեր անկուշտ հողին:

Ինչո՞ւ չես տեսներ այն խեղճ մայրերուն,  
Թէ ինչպէս անոնք իրենց ցաւերուն  
Գտած են դարման այն Հի պ ո կ ր ա տ է ն,  
Դուն ալ ներշնչուէ՛ անոնց հոգիէն:

Արցունք չի՛ թափես դազադիս վրայ,  
Մարմինս, ո՛վ մայր, անհանգիստ կ'ըլլայ,  
Համբերուէ, մայր իմ, դո՛ւ միշտ համբերուէ՛  
Գիտցիր թէ ցաւը միշտ ցաւ կը բերէ:

41694  
H



Ի՞նչ է կեանքը այս շուտ մարդկութեան,  
Թէ ոչ Գողգոթայ մը խաչելութեան:  
Կեանքը այսպէս է, ո՛վ մայր իմ անուշ,  
Ցաւը սև մահիս թող չըլլայ քեզ փուշ:

Կաթղ նուիրէ՛ ինձ վերջին անգամ  
Որ ցուրտ շիրմիս տակ հանգիստ քնանամ,  
Փաթթէ՛ զիս պատանգ զիր մէջ դադաղին,  
Ալ յոգնաբեկ մարմինս թող տանին:

Եւ լսէ՛ ինձ, մայր իմ, գորովագութ,  
Շիրմիս վրայ սփռէ՛ խուճիկ ու աղօթք,  
Մաշած մարմինս գուցէ հոն հանգչի,  
Այս աշխարհի մէջ ես չի խնդացի:

Աղօթքդ ուղղէ՛ միշտ այն մեծ Մարդուն,  
Որ հոգիս ճախրէ՛ մէջ հրեշտակներուն,  
Ինչու որ մայր իմ դէռ իմ վարդ հոգին՝  
Կը տենչայ սեղմել վարդը իր լանջքին:

.....

Ա Ռ Ա Ի Օ Տ

Առաւօտուն երբ արթննամ  
Ուժ մը կայ որ մէջս կ'զգամ,  
Կը խոկամ միշտ խենթի նման  
Սենեակիս մէջ կ'ընեմ մերթ ման:

Ուժ մըն է ան մեծ ու հզօր,  
Ուժ մը թաքուն, խորհրդաւոր,  
Նա կանգ չառնէր խղճի առաջ,  
Փուլ կ'ընէ սրտերը կանանչ:

Առաւօտները միշտ սահեցան  
Գաղտնիքը ուժին չի գտան,  
Ուժը շատ մեծ է ու վսեմ,  
Դատարկ է ինչի ալ դիմեմ:

Թէ առաւօտները այսպէս  
Կ'ուզան հոգելիկելու մեզ,  
Թող առ յաւէտ նսեմանան,  
Ալ ննջենք ընդ յաւիտենութեան:

## ՏԷ՛Ր ԱՍՏՈՒԱԾ

Ո՛վ դու մարդկութեան գերագոյն էակ,  
Եթերական անաչառ թագաւոր,  
Չե՞ս տեսներ սա անգութ հոգին այսքան  
Որ կը բանայ վէրքեր ահաւոր:

Չե՞ս տեսներ սա հոգին կեղծաւոր,  
Չե՞ս տեսներ սա հոգին ամբարտաւան  
Որ վարդ հոգիս կ'ընէ միշտ օրօր  
Ու կը հեգնէ զիս տատրակի նման:

Ո՛վ Տէր իմ Աստուած, այսքան հեգնութիւն,  
Ալ չեմ հանգուրժեր այս կեանքին ունայն,  
Եւ կը դիմեմ Աստուածութեանդ անհուն  
Որ դու պատժես սա մարդատիպ հսկան:

Եթէ ես Աստուած՝ ու այնտեղ բազմած,  
Հապա, ուրեմն Տէ՛ր իմ երկնային,  
Դատէ՛ սա հոգին եթէ դու կաս,  
Թէ ոչ, կը բողոքեմ քո՛ դատաստանին :

Թէ այս էակները արգանդաւոր  
Մնեցուցած էք տուփ Պ ա ն դ է ո ս և ա ն,  
Չգէ՛ որ խօսքս ուղղեմ տէր դատաւոր,  
Մաշած է սեղանդ արդարութեան :

Տառապողը մենք,  
Ու անոնք հրճուող,  
Ընթացք տուր դատասրահիդ, անողո՛ք,  
Թէ որ չես ուզեր «հինցած ես» ըսող :

Ներէ՛ Տէր, ներէ՛ Դու իմ գրիչին,  
Եւ տե՛ս սա արցունքախառն թանաքը,  
Որ՛ զոհ է գրիչս անոր քմայքին,  
Ներէ՛ Տէր, ալ կ'ըսպասեմ սև մահը :



## Ա Շ Խ Ա Ր Հ

Հէ՛յ Աշխարհ, դու կուռ բնութեամբ  
Սիրտս պատած ես լոկ տխրութեամբ,  
Թէ Աշխարհ ե՛ս ու մենք ալ քեզի  
Լսէ՛ դու ինձ, սիրտս կը մաշի:

Թէ Աշխարհ ես մարդկութիւն ծնած,  
Փշրէ՛ Աշխարհին շղթան ժանգոտած,  
Ինչու որ Աշխարհ ծոցիդ մէջ հոժ  
Կան էակներ որ մեզ կուտան խոց:

Սիրոյ խորանին առաջ Աստուած,  
Թախանձեցի սրտով տխրամած,  
Թէ աշխարհէ դու տէր Աշխարհի  
Փշրէ՛ ժանգոտ շղթան Աշխարհի:

Դու մեծ Աշխարհ այս հոժ մարդկութեան  
Չես սահմաներ օրէնք մը համայն,  
Փշրէ՛ Աշխարհիդ խորանը սիրոյ  
Զի չի լսեր մեզ Աստուածը Սիրոյ:

Օրերով ես քնարը ձեռքիս  
Ածեցի սէր սիրակէզ սրտէս,  
Չի լսեց ինձ ենթական արարած,  
Ո՞վ ես դու, փշրէ՛ շղթադ ժանգոտած:



Ե Ր Կ Ի Ն Ք Ը


Երկինքդ կայ փաղանգ մը գերուժի,  
Ու օրերով ծնկաչոք խնդրեցի  
Իմ սիրոյ մեծ վէրքի մէկ բալասան,  
Ձի լսեցիր ինձ դո՛ւ երբէք սակայն:

Բոպէ մը նայէ՛ սա հէք կարգերուն,  
Որ միշտ կուտան վիշտ մեր խեղճ մայրերուն,  
Կ'աղօթեմ միշտ քո գերուժի բոյլին  
Որ հրաւիրեն սիրոյ ատեանին:

Կրակի պէս սիրտս կը ճարճատէ,  
Ըսէ՛ երկինք, այդ ո՞վ պիտ մարէ.  
Եթէ ինչպէս հոժ աստղերուդ ես տէր  
Քահիդ բազմողին ըսէ՛, օրէնք դիր, Տէ՛ր:

Իրկուն և առտու ե՛ս սիրոյ հլու,  
Եկայ երկնաբարքէդ խնդրելու  
Աստղերուդ մէջէն շանթեր սփռես,  
Ձի սիրաձիգ սիրտս է բոցի պէս:

Պարնայ իրիկուայ փայլուն աստղերէդ՝  
Ո՛վ Աստղ, չի ներշնչեցիր ինձ յոյս մը գէթ,  
Երկինք դո՛ւ շատ մեծ, անյողղողդ մեզմէ,  
Սիրատոյ սիրտս դու ալ ողջունէ:



### ՏԽՈՒՐ ԿՈՉՆԱԿ

Կոչնակը կը հնչէ կոչնակ մը մահուան,  
Ի զո՛ւր ալ մարդիկ իմ վրայ կ'ողբան :  
Մահուան կոչնակն է որ տխուր կը հնչէ,  
Մահը միշտ մահ է, լաց կոծ ալ ի՞նչ է :

Կոչնակ դո՛ւ հնչէ՛ միշտ այդպէս վսեմ  
Որ զիս ալ տանին, զի շատ յոգնած եմ,  
Կոչնակ անվարան դու տխուր հնչէ՛,  
Մահը միշտ մահ է, լաց-կոծ ալ ի՞նչ է :

Ձայնը կոչնակին սիրելիներուս  
Պիտ ընէ անոնք այնքան սրտայոյզ,  
Կոչնակ անվարան դո՛ւ տխուր հնչէ,  
Մահը միշտ մահ է, լաց-կոծ ալ ի՞նչ է :

Կոչնակ դո՛ւ հնչէ՛ քեզի ես կ'ըսեմ  
Մահէս վերջ ինձ լացողին ես կը թժնեմ.  
Կոչնակ անվարան դու տխուր հնչէ՛  
Մահը միշտ մահ է, լաց-կոծ ալ ի՞նչ է :

Միայն կը ցաւիմ թէ ինչո՞ւ մարդոց  
Մեռնելէն յետոյ անոնց կուտայ խոց.  
Հնչէ՛ տխուր դու, ո՛վ իմ կոչնակ,  
Ի գո՛ւր իմ վրայ ալ այդպէս կ'ողբաք :



## ԻՄ ԴԱԳԱՂԸ

Դագաղս տանին երբ ի գերեզման  
Գիտեմ անպայման իմ վրայ կուլան,  
Ծաղկապսակներ կը սփռեն ինձ,  
«Տէրը լուսաւորէ հոգին անբիծ»:

Սև դագաղս կ'առնէ իր տխուր քայլ  
Սրտակից հոգիներ կ'ըլլան միշտ մռայլ.  
Դագաղս կը դնեն ծառան մը յատակ,  
Ու հոն կ'աղօթեն հոգւոյս նահատակ:

Հող իմ սիրելիները խոկահար,  
Վերջին անգամ կը տենչան դալկահար  
Ճակտիս դրոշմել համբոյրներնին,  
Նաև տխուր մահերգներ կ'սկսին:

Դագաղակիրները կը մերձենան,  
Ու կարծես ինձ հոգի տալ կը տենչան,  
Տխուր դագաղս յառաջ կ'ընթանայ  
Եւ արձագանգը մահերգին՝ կը սաստկանայ:

Հեռո՛ւն, հո՛ն երամակ մը ունկնդիր,  
Դառնաւէտ մահու կոծէն պարտադիր  
Կը չուէ սև դագաղիս ետեէն.  
Իմ խեղճ, սիրելիք՝ ձեզի կը կանչեն:

## Հ Ր Ա Վ Ե Շ Տ

Մ'նաք բարեաւ ո՛վ ընկերներ կեանքի,  
Ինչո՞ւ կ'ապրիմ մէջն այս Աշխարհի,  
Միտքս յոգնած ճակատս թառամած  
Եւ քանի որ ծաղկէս եմ զրկուած:



Ալ ես կ'երթամ ու կը ձգեմ ձեզ,  
Բայց իմ անուշ ու քաղցր ընկերներ  
Խօսք մ'ունիմ ձեզ իմ սիրատոշ սրտէս,  
Լա՛ւ դարբինեցէք մտքին մէջը ձեր:

Կը հուեմ օղաչուի մը նման  
Կապուտակ երկնքի մոայլ ամպերէն,  
Լաւ լսեցէք իմ խօսքերուս սակայն,  
Թէ ո՛չ կը բողոքեմ շիրմիս մէջէն:

Մի՛ արտասուէք սև դագաղիս վրայ,  
Մինչ հոն է շաւիղը մեր յաւիտեան,  
Հիւժեալ հոգիներ միշտ այսպէս կ'երթան,  
Ինչպէս Պաշեան, Զարիֆեան, Դուրեան:

Կոթող մը կանգնեցէ՛ք շիրմիս վրայ,  
Խորագրեցէ՛ք հսկայ տառերով  
Մեծ ու դառն վիշտը իմ հոգիիս,  
Որ չի քալեն այս ճանապարհով:

Մնաք բարեաւ ո՛վ ընկերներ կեանքի,  
Մի՛ արտասուէք երբէք ալ ինձ համար,  
Դրժուած սիրտս խոց ունի անհամար.  
Այս է վշտահարին խօսքը վերջի:







ԳԱՍ Հիմնարար Գիտ. գրադ.



220041694

(207)

A 41694

ԳԻՆ 5 ՖՐԱՆՔ, ԱՄԵՐԻԿԱ 23 ՍԷՆՏ